ԱՍՅԱ ՋԵՅՐԱՆՅԱՆ
Ֆինանսներ, բակալավրիատ, 3-րդ կուրս

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հիմնաբառեր. *արդյունաբերություն, հանքարդյունաբերություն, ՀՆԱ, տնտեսական աճ, արտաքին առևտուր*

Հոդվածում քննարկվում են արդյունաբերության նշանակությունը, մասնավորապես՝ հանքարդյունաբերության դերը ՀՀ տնտեսության զարգացման գործում, ոլորտում առկա խնդիրները, COVID-19 համավարակի և Արցախյան երկրորդ պատերազմի ազդեցությունը հանքարդյունաբերական ոլորտի վրա: Եզրակացվել է, որ արդյունաբերության և տնտեսական աճի միջև առկա է դրական կապ, այսինքն՝ արդյունաբերական ոլորտի զարգացումը կհանգեցնի տնտեսական աճի: Անհրաժեշտ է ձեռնարկել համակարգային բարեփոխումներ, հստակ սահմանել արդյունաբերական քաղաքականությունը: Առաջարկվել է ձեռք բերել համապատասխան տեխնոլոգիաներ՝ հանքարդյունաբերական արտադրանքի մշակման բարձր մակարդակի ապահովման համար, որպեսզի այդ արտադրանքը միջազգային շուկայում լինի մրցունակ և սպառվի առավել բարձր գնով:

Ներածություն: Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում արդյունաբերության դերը բավականին մեծ է, քանի որ այն կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 1/5-ը, և հենց արդյունաբերության զարգացմամբ է պայմանավորված երկրի տնտեսության առաջխաղացումը: Արդյունաբերական ոլորտի զարգացման խթանումը կարող է լինել կայուն զարգացման բանալին: Տնտեսական աճին և զարգացմանը նվիրված գրականության մեջ հիմնավորվում է, որ նույնքան ամուր կապ է առկա արդյունաբերական արտադրանքի աճի և ՀՆԱ-ի աճի միջև: Հանքարդյունաբերությունը նույնպես էական դեր է խաղում տնտեսության զարգացման գործում: 2022 թ. այն կազմել է ՀՆԱ-ի 6,09%-ը: Այս ոլորտի զարգացման և տնտեսության մեջ վերջինիս ազդեցությունը մեծացնելու համար անհրաժեշտ է նպատակային օգտագործել մտավոր ներուժը, արտադրանքի բարձր մշակում իրականացնելու համար ներդնել անհրաժեշտ տեխնիկա և տեխնոլոգիա, ձևավորել մարքեթինգային և տեղեկատվության հասանելիության մշակույթ:

Գրականության ակնարկ: Արդյունաբերությունը աշխատանքի գործիքների, էներգիայի արտադրությամբ, հումքի, վառելիքի, նյութերի հանույթով, գյուղատնտեսության մեջ և այլ բնագավառներում ստեղծված արտադրանքի մշակմամբ ու վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների ամբողջությունն է: Հետազոտող Կալդորը ենթադրել է, որ տնտեսական աճի գործընթացում հենց արդյունաբերական հատվածն է երկրի զարգացման շարժիչ ուժը, քանի որ արտադրողականության պոտենցիալ աճն ամենաբարձրն է այս ոլորտում: Տնտեսագետներ Օ'Սալիվանի և Շեֆրինի կարծիքով՝ արդյունաբերությունը փոփոխություն է բերում երեք ճանապարհով՝ արդիականացում, լայնածավալ էներգետիկա և մետաղագործության արտադրության զարգացում: Այս ուղղությունները սերտորեն կապված են տնտեսական աճի հետ: Նրանք նաև

պնդում են, որ ինդուստրալիզացումն իր հետ բերում է ռացիոնալացման սոցիոլոգիական գործընթաց: Իսկ տնտեսագետ Ռոդրիկը ՀՆԱ-ի հինգ տարվա ցուցանիշների հիման վրա եզրակացնում է՝ զգալի դրական կապ է առկա ՀՆԱ-ի աճի տեմպերի և արդյունաբերության մասնաբաժնի միջև: Նա հստակ ձևակերպում է, որ ժամանակակից արդյունաբերական գործունեությանն անցումը աճի շարժիչ է ապնդում է, որ կառուցվածքային վերափոխումը զարգացող աշխարհում արագացված աճի միակ բացատրությունն է[1]:

Վերլուծություն: Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների համաձայն՝ 2021 թ. ՀՀ պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 62,2%-ը՝ շատ ավելի բարձր, քան մինչհամավարակային մակարդակը (50,1%): Քանի որ տնտեսությունը վերականգնվում է, ապա 2023 թ. հարաբերակցությունը պետք է աստիճանաբար նվազի մինչև 58% (աղյուսակ 1): 2021 թ. գործազրկության մակարդակը աճել է մինչև 18,5%: ԱՄՀ-ն ակնկալում է, որ գործազրկության միտումը 2023 թ. փոքր-ինչ կնվազի մինչև 17,8%: Համաշխարհային բանկի վերջին թվերը ցույց են տալիս, որ ազգային աղքատության մակարդակը գնահատվում է 44%: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2021 թ. դրությամբ կազմել է 13638 ԱՄՆ դոլար[2]:

Աղյուսակ 1

ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները 2020-2024 թթ.[3]

Հիմնական ցուցանիշներ (մլրդ ԱՄՆ դոլար)	*2020*	*2021*	*2022*	*2023*	*2024*
ՀՆԱ	12,64	13,93	17,69	19,46	20,99
ՀՆԱ-ի տարեկան տոկոսային փոփոխություն	-7,4	5,7	7,0	3,5	4,4
ՀՆԱ՝ մեկ շնչի հաշվով	4 267	4 701	5 972	6 568	7 083
Պետական պարտք (ՀՆԱ-ի տոկոսով)	63,5	60,2	52,3	52,9	53,0
Գարծազրկության մակարդակ	18,1	15,3	15,2	15,1	14,9
Գնաճի ցուցանիշ	1,2	7,2	8,5	7,0	5,0

Հայաստանի տնտեսությունը հիմնված է գյուղատնտեսության, օգտակար հանածոների շահագործման, հիդրոէլեկտրակայանի, հեռահաղորդակցության, ոսկերչության և զբոսաշրջության վրա: Գյուղատնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի 11,2%-ը, այս ոլորտում աշխատում է ընդհանուր աշխատուժի 24%-ը: Հայաստանը տուժում է վարելահողերի ցածր մշակման, սահմանափակ ռեսուրսների և քաղաքական անկայունության պատճառով: Փոքր և մասնատված հողակտորներն օգտագործվում են գյուղատնտեսության կենսապահովման համար: Հայաստանի անասնաբուծության ոլորտը նույնպես առանցքային է, որը ներկայացնում է երկրի գյուղատնտեսության համախառն արտադրանքի գրեթե 40%-ը (գծապատկեր 1)[4]:

---

[1] Տե՛ս **Cisse Ndiaya, Kangjuan Lv**., Role of industrialization on economic growth: The experience of Senegal (1960-2017), Shanghai, China 2018, էջ 2073, https://www.researchgate.net/publication/328144651_Role_of_Industrialization_on_Economic_Growth_The_Experience_of_Senegal_1960-2017#fullTextFileContent

[2] https://www.lloydsbanktrade.com/en/market-potential/armenia/economical-context?fbclid=IwAR0B4syO4pmy8iOOUKTdU03cAF6Jpl4xumzmyrVGobHd6cUVO-Dg36FjIRQ

[3] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ https://www.lloydsbanktrade.com/en/market-potential/armenia/economical-context?fbclid=IwAR3jkJSS76g_JhCKUYqEJc0_rnuI8FJ8knikFh8nsLVs9Ii_8KWDscjuyI4 տվյալների հիման վրա:

[4] https://www.lloydsbanktrade.com/en/market-potential/armenia/economical-context?fbclid=IwAR0B4syO4pmy8iOOUKTdU03cAF6Jpl4xumzmyrVGobHd6cUVO-Dg36FjIRQ



Գծապատկեր 1. ***ՀՀ տնտեսության ճյուղերի կառուցվածքը 2012-2021 թթ.***[1]

Ծառայությունը կազմում է ՀՆԱ-ի 53,2%-ը, այս ոլորտում աշխատում է ակտիվ բնակչության 51,2%-ը: Ոլորտը ներառում է ոսկերչությունը և զբոսաշրջությունը: Հատկապես աճել է բանկային գործունեությունը, այն համարվում է ամուր և կայուն ոլորտ, կազմված է 18 առևտրային բանկերից: COVID-19 համավարակը լրջորեն ազդել է զբոսաշրջության ոլորտի վրա, այնուամենայնիվ, 2021 թ. առաջին կիսամյակում Հայաստան այցելած օտարերկրյա զբոսաշրջիկների թիվը մեկ տարի առաջ նույն ժամանակահատվածի 307 590-ից նվազել է մինչև 239 263[2]:

Արդյունաբերությունն ապահովում է ՀՆԱ-ի 27%-ը, այս ոլորտում աշխատում է ընդհանուր աշխատուժի 17,5%-ը: Հայաստանն ունի պղնձի, մոլիբդենի, բոքսիտի, ցինկի, կապարի, երկաթի, ոսկու և սնդիկի հանքավայրեր, որոնք երկրի քիմիական արդյունաբերության ոլորտի հիմքն են և հիմնականում արտահանվում են: Հանքարդյունաբերության ոլորտը ՀՆԱ-ի և արտահանման (հատկապես՝ մետաղական հանքաքարերի) ամենամեծ ներդրողներից մեկն է: Հիդրոէլեկտրաէներգիան երկրում այնքան լավ է զարգացած, որ Հայաստանն այժմ այն արտահանում է: Միայն արտադրական ոլորտը կազմում է ՀՆԱ-ի 12,4%-ը: Կառավարության պաշտոնական տվյալների համաձայն՝ 2021 թ. հունվար-նոյեմբերին արդյունաբերական արտադրանքը տարեկան կտրվածքով աճել է 2,7%-ով՝ մինչև 2,1 տրլն ՀՀ դրամից մի փոքր ավելի (գծապատկեր 1)[3]:

ՀՀ Կառավարությունը և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ) ստորագրել են Հայաստանում 2022-2026 թթ. ներառական և կայուն արդյունաբերական զարգացման «Երկրի ծրագրային

---

[1] https://www.statista.com/statistics/440577/armenia-gdp-distribution-across-economic-sectors/?fbclid=IwAR0pmzb1AT2ewaV9bi4rJaTJ_u_kqDB1B9bUi1-mhqr2fVzSKi85rndp6BA#:~:text=In%202021%2C%20agriculture%20contributed%20around,percent%20from%20the%20services%20sector (2022 թ. դեկ. 7)

[2] https://www.lloydsbanktrade.com/en/market-potential/armenia/economical-context?fbclid=IwAR0B4syO4pmy8iOOUKTdU03cAF6JpI4xumzmyrVGobHd6cUVO-Dg36FjIRQ

[3] https://www.lloydsbanktrade.com/en/market-potential/armenia/economical-context?fbclid=IwAR0B4syO4pmy8iOOUKTdU03cAF6JpI4xumzmyrVGobHd6cUVO-Dg36FjIRQ

փաստաթուղթը» (ԵԾՓ): **Երկրի 5-ամյա ծրագրի փաստաթուղթը համահունչ է մեր ազգային առաջնահերթություններին և կօգնի բարելավել արդյունաբերական արտադրանքն ու արտադրողականությունը՝ կայուն տնտեսական փոխակերպման, արդյունաբերության բազմազանեցման և նորարարությունների ու տեխնոլոգիաների փոխանցման վրա հիմնված թվայնացման միջոցով:** ԵԾՓ-ի հիմքում հետևյալ երեք թեմատիկ բաղադրիչներն են. արդյունաբերական մրցունակություն և շուկաների հասանելիություն նորարարության և թվայնացման միջոցով, կայուն ագրոբիզնես և աջակցություն ՓՄՁ-ներին, էներգաարդյունավետություն, վերականգնվող էներգիա և շրջակա միջավայրի կայուն կառավարում[1]:

Երկու կողմերի համատեղ ձեռքբերումների շարքում են.

- ագրովերամշակման արժեշղթաների ամրապնդման միջոցով ՄԱԱՁԿ-ի աջակցությամբ Հայաստանի վեց մարզում 53 գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը, շահառուների թիվը՝ ավելի քան 700:
- Կարողությունների զարգացման միջոցով կանանց շրջանում ձեռնարկատիրության խթանումը: Կարիքների վրա հիմնված, մասնագիտական և նորարարական գործիքների միջոցով ՄԱԱՁԿ-ն գյուղական և քաղաքային վայրերի ավելի քան 1000 բնակչի համար զբաղվածության հնարավորություններ է ստեղծել:
- Հայաստանում շրջանաձև և կանաչ տնտեսության խթանմանն ուղղված ջանքերում ՄԱԱՁԿ-ն աջակցել է վերականգնվող էներգիայի և նորարարական տեխնոլոգիաների կիրառմանը, այդ թվում՝ կենսագազի կայանների ստեղծման և արևային ջրատաքացուցիչների տեղադրման միջոցով:
- COVID-19 համավարակի բացասական ազդեցություններին դիմակայելու նպատակով ՄԱԱՁԿ-ն կարի արտադրությամբ զբաղվող հայկական տեղական ընկերություններին աջակցել է 2,623 հավաքածու անկողնային պարագաներ և 2,000 բժշկական համազգեստ արտադրելու հարցում[2]:

Հանքարդյունաբերությունը, լինելով ՀՀ արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկը, էական դեր է խաղում ինչպես ոլորտի, այնպես էլ ողջ տնտեսության զարգացման գործում՝ կազմելով 2022 թ. ՀՆԱ-ի շուրջ 6.09%-ը: Արդյունաբերական ներուժը յուրաքանչյուր երկրի՝ ներքին ռեսուրսներով ապահովվածության կարևորագույն ցուցանիշներից մեկն է, այդ իսկ պատճառով այժմ մեծ նշանակություն է տրվում արդյունաբերության ոլորտի հատկապես որակական զարգացման հեռանկարին (շեշտը դնելով հանքարդյունաբերական արտադրանքի մշակման որակի բարձրացման և սկզբնական սպառման շղթայի ապահովման վրա), ինչը թույլ կտա ապահովել առկա ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձր աստիճան, հետևաբար՝ լրացուցիչ եկամուտներ: 2022 թ. արդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալն աճել է 7.9%-ով, իսկ հանքարդյունաբերության ոլորտի արտադրանքի ծավալը 3,2%-ով նվազել է:

[1] https://mineconomy.am/news/2430
[2] https://mineconomy.am/news/2430



Գծապատկեր 2. ***ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները 2017-2022 թթ.***[1]

Ինչպես երևում է գծապատկերներ 2-ից և 3-ից, 2017-2020 թթ. ընթացքում ՀՀ-ում հանքարդյունաբերական արտադրանքի ծավալներն ավելի առաջանցիկ աճ են ունեցել, քան արդյունաբերությունն ու ՀՆԱ-ն ամբողջությամբ վերցրած: Սակայն, 2020 թ. 44-օրյա պատերազմի և կորոնավիրուսային համավարակի պատճառով թե՛ ՀՆԱ-ն, թե՛ արդյունաբերության ոլորտը անկում ապրեցին:



Գծապատկեր 3. ***ՀՀ մակրոտնտեսական հարաբերական ցուցանիշները 2017-2022 թթ.***[2]

Գծապատկեր 4-ում պատկերված է հանքանյութերի ռենտաների (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով արտահայտված) աճի տեմպը: Հանքանյութերի ռենտաները ներկայացնում են օգտակար հանածոների պաշարների արտադրության արժեքի և դրանց արտադրության ընդհանուր ծախսերի միջև տարբերությունը՝ արտահայտված համաշխարհային գներով: Հաշվարկի մեջ ներառված օգտակար հանածոներն են անագը, ոսկին, կապարը, ցինկը, երկաթը, պղինձը, նիկելը, արծաթը, բոքսիտը և ֆոսֆատը: Ինչպես երևում է գծապատկերից, այս ցուցանիշը դիտարկվող ժամանակահատվածում իր առավելագույն արժեքներն ունեցել է 2010-2011 թթ., և արդեն 2018 թվակա-

[1] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:
[2] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

նից սկսած՝ դիտարկվել է աճի կայուն միտում: Ըստ էության, կորոնավիրուսը, Արցախյան պատերազմը և ռուս-ուկրաինական պատերազմն այս ցուցանիշի վրա էական ազդեցություն չեն ունեցել: Պետք է նշել, որ տնտեսական աճի մեջ բնական ռեսուրսների դերը հաշվի առնելը կարևոր է կայուն զարգացման համար վերլուծական հիմք ստեղծելու տեսանկյունից: Որոշ երկրներում բնական ռեսուրսներից ստացված եկամուտները կազմում են ՀՆԱ-ի զգալի մասնաբաժինը, և այդ եկամուտների մեծ մասը գալիս է տնտեսական ռենտաների տեսքով՝ որպես ռեսուրսների արդյունահանման ծախսերը գերազանցող եկամուտներ:

Բնական ռեսուրսներն առաջացնում են տնտեսական ռենտա, քանի որ դրանք չեն արտադրվում: Արտադրվող ապրանքների և ծառայությունների համար մրցակցային ուժերն ընդլայնում են առաջարկն այնքան ժամանակ, քանի դեռ տնտեսական շահույթը չի իջնում զրոյի, սակայն ֆիքսված առաջարկով բնական ռեսուրսները հաճախ գերազանցում են իրենց արտադրության արժեքը: Չվերականգնվող ռեսուրսներից՝ հանածո վառելանյութերից և օգտակար հանածոներից ռենտաները, ինչպես նաև անտառահատումից ստացված ռենտաները վկայում են երկրի կապիտալի լիկվիդացիայի մասին: Երբ երկրները նման ռենտաներն օգտագործում են ընթացիկ սպառմանն աջակցելու, այլ ոչ թե նոր կապիտալ ներդնելու՝ սպառվողը փոխարինելու համար, նրանք, ըստ էության, պարտք են վերցնում՝ ի վնաս և ի հակադրություն իրենց ապագայի:



Գծապատկեր 4. ***Հանքանյութերի ռենտաները ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով, 2002-2021 թթ.***[1]

Հանքարդյունաբերության ոլորտի նշանակությունը մեծ է նաև պետբյուջեի եկամտային մասի լրացման առումով: Խոշոր հարկատուների ցանկում առանձնանում են հատկապես այս ոլորտի ընկերությունները: Որպես օրինակ կարելի է նշել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», որը 2022 թ. 1000 խոշոր հարկատուների ցանկում զբաղեցրել է 1-ին տեղը՝ 143,9 միլիարդի չափով վճարված հարկերով:

[1] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ https://databank.worldbank.org/source/adjusted-net-savings/Series/NY.GDP.TOTL.RT.ZS# տվյալների հիման վրա:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի դերը հատկապես զգալի է արտաքին առևտրում, ինչն արտահայտվում է նաև այս բնագավառի արտահանման և ներմուծման ցուցանիշների տարեցտարի մեծացմամբ: Արտահանման մեջ մեծ տեղ է գրավում թանկարժեք մետաղների և քարերի արտահանումը, ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ հանքարդյունաբերական արտադրանքը, որպես կանոն, արտահանվում է մշակման ցածր մակարդակով, հետևաբար՝ ցածրորակ է ու միջազգային շուկայում սպառվում է ցածր գնով: Այլ կերպ ասած՝ արտահանման մեծ գումարային ծավալներն ապահովվում են քանակական և ոչ թե որակական ցուցանիշների բարելավման հիման վրա:

Աղյուսակ 2

ՀՀ արտաքին առևտուրը՝ ըստ ապրանքային խմբերի (2019-2022 թթ.)[1]

Տարի	Արտահանում (հազար ԱՄՆ դոլար)				Ներմուծում (հազար ԱՄՆ դոլար)			
	2019	2020	2021	2022	2019	2020	2021	2022
Հանքահումքային արտադրանք	743,0	828,1	982,2	1022,0	814,2	745,0	937,7	1196,0
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	16,0	20,1	20,3	37,1	95,5	92,9	109,4	160,6
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	414,8	366,0	326,3	989,3	299,9	149,5	248,5	690,8
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	261,1	228,2	364,5	459,8	346,3	358,3	391,2	624,4
Ընդամենը	**2648,6**	**2544,5**	**3016,0**	**5360,1**	**5537,6**	**4559,4**	**5362,2**	**8768,7**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի արտահանման ծավալներն էապես աճել են. միայն 2022 թ., նախորդ տարվա համեմատությամբ, այդ ցուցանիշն աճել է 4,1%-ով՝ կազմելով շուրջ 1022 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ տնտեսության համար արտաքին և ներքին առևտրի սալդոն տարիներ շարունակ մնում է բացասական ոչ միայն ամբողջ երկրի տնտեսության մակարդակով, այլև, մասնավորապես, հանքարդյունաբերության ոլորտում: Այսպես. հանքարդյունաբերական արտադրանքի ներմուծման ծավալը, բացարձակ ցուցանիշներով, արտահանման ծավալը 2022 թ. գերազանցել է մոտ 17%-ով՝ կազմելով շուրջ 1196 մլն ԱՄՆ դոլար: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ հանքարդյունաբերական արտադրանքի արտահանումը, ներկրման համեմատությամբ, ունեցել է առաջանցիկ աճ: Հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող արտաքին առևտրի սալդոն թույլ է տալիս եզրակացնել նաև, որ արտահանվող որոշ ապրանքային խմբեր ոչ թե արտահանման, այլ ներքին շուկայում սպառման և որպես սպառողական արտադրանք ձևավորվելու խնդիր ունեն: Հետևաբար, անհրաժեշտ է երկրի ներսում զարգացնել սեփական հումքի օգտագործման հնարավորությունները:

[1] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

Հանքարդյունաբերության վրա ազդում են մի շարք գործոններ, դրանք են՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, որոնք իրենց ուրույն ազդեցությունն են ունենում հանքարդյունաբերության վրա:

Բնապահպանական ազդեցություն. հողի մակերևույթի ձևախախտումը, հանքանյութերի արդյունահանման հետևանքով առաջացած թունավոր նյութերի ազդեցությունը մթնոլորտի վրա, քիմիական նյութերի արտահոսքն ու ջրային ռեսուրսների աղտոտումը ջրային ռեսուրսների վրա բացասական ազդեցություն են ունենում:

Տնտեսական ազդեցություն. ներդրումների աճը հանգեցնում է համայնքի կենսամակարդակի բարձրացմանը, հարկային եկամուտների աճը, որը շղթայաբար բերում է տնտեսական աճի, դրական է ազդում հանքարդյունաբերական ոլորտի զարգացման վրա:

Սոցիալական ազդեցություն. դրական՝ աշխատատեղերի ստեղծումը հանգեցնում է աղքատության մակարդակի նվազեցմանը, մասնագիտացված հասարակական կազմակերպությունների ներառականության շնորհիվ որոշումների նկատմամբ պատասխանատվության զգացումը՝ քաղաքացիական հասարակության զարգացմանը: Բացասական՝ պայթեցումների, տրանսպորտի և տեխնիկայի աշխատանքի հետևանքով աղմուկն առաջ է բերում համայնքի բնականոն կյանքի խաթարում, շրջակա միջավայրի աղտոտվածությունը՝ առողջական խնդիրներ:

Եզրակացություն: Այսպիսով, կատարված վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ արդյունաբերական ոլորտը շատ մեծ ազդեցություն ունի ՀՀ տնտեսական աճի վրա: Հանքարդյունաբերությունը բավականին մեծ տեսակարար կշիռ ունի ՀՆԱ-ում, և այս ոլորտի զարգացումը կնպաստի տնտեսության առաջխաղացմանը: Արդյունաբերական ոլորտի վրա խիստ բացասաբար են անդրադարձել COVID-19 համավարակն ու 44-օրյա պատերազմը: 2022 թ. արդյունաբերական արտադրանքի աճը բավականին խոստումնալից է, սակայն պետք է որոշակի համակարգային բարեփոխումներ ձեռնարկել, սահմանել արդյունաբերական հստակ քաղաքականություն և իրականացնել գործողություններ, որոնք կնպաստեն ՀՀ արդյունաբերական ոլորտի զարգացմանը և երկրի տնտեսական աճին:

Առաջարկություններ: ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման և տնտեսության մեջ վերջինիս ազդեցության մեծացման նպատակով առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

1. նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրման քաղաքականության մշակում՝ շեշտը դնելով հանքարդյունաբերական արտադրանքի բարձր տեխնոլոգիական մշակման վրա:
2. Մտավոր ներուժի նպատակային օգտագործում, վերապատրաստման միջոցառումների կազմակերպում, գիտելիքահենք տնտեսության ստեղծում:
3. Գործարար միջավայրի բարելավում, մարքեթինգային և տեղեկատվության հասանելիության մշակույթի ձևավորում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Թ., ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի խնդիրները և զարգացման հեռանկարները, Եր., 2011 թ.:
2. Հայաստանում 2022-2026 թթ. ներառական և կայուն արդյունաբերական զարգացման «Երկրի ծրագրային փաստաթուղթը» (ԵԾՓ), 2021:
3. ՀՀ վիճակագրական կոմիտե:
4. Cisse Ndiaya, Kangjuan Lv., Role of industrialization on economic growth: The experience of Senegal (1960-2017), Shanghai, China 2018.
5. www.researchgate.net
6. www.lloydsbanktrade.com
7. www.statista.com
8. mineconomy.am
9. databank.worldbank.org

АСЯ ДЖЕЙРАНЯН

Финансы, бакалавриат, 3-й курс

РОЛЬ ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ В РАЗВИТИИ ЭКОНОМИКИ РА

Ключевые слова: *промышленность, горнодобывающая промышленность, ВВП, экономический рост, внешняя торговля*

В статье рассматривается значение промышленности, в частности, роль горнодобывающей промышленности в развитии экономики РА, проблемы в этой сфере, влияние пандемии COVID-19 и второй Арцахской войны на горнодобывающую отрасль. Сделан вывод о наличии положительной связи между промышленностью и экономическим ростом, то есть развитие промышленной отрасли приведет к экономическому росту. Необходимо провести определенные системные реформы, четко определить промышленную политику. Было предложено приобретение соответствующих технологий для обеспечения высокого уровня переработки продукции горнодобывающей промышленности, чтобы быть конкурентоспособными на международном рынке и осуществлять сбыт по самой высокой цене.

ASYA JEYRANYAN

3rd year Bachelor, Department of Finance

THE ROLE OF THE MINING INDUSTRY IN THE DEVELOPMENT OF THE RA ECONOMY

Keywords: *industry, mining, GDP, economic growth, foreign trade.*

The article discusses the importance of industry, particularly the role of mining in the development of the RA economy, the problems in this sector, the impact of the COVID-19 pandemic and the second Artsakh war on the mining sector. It is concluded that there is a positive relationship between industry and economic growth, that is, the development of the industrial sector will lead to economic growth. It is necessary to carry out certain systemic reforms, clearly define industrial policy. It was proposed to purchase appropriate technologies to ensure a high level of processing of mining products in order to be competitive in the international market and sell at the highest price.